

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՆԱՐԻՆԵ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

**ԱՆՑՅԱԼ ԵՎ ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան – 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Ս. Ղազարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր **Լ. Մ.  
Խաչատրյան**

բանասիրական գիտությունների  
թեկնածու **Ա. Լ. Յուզբաշյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվ.  
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015 թ. հունիսի 15-  
ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում  
գործող ԲՈՂ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի  
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
բանասիրական գիտությունների թեկնածու՝

**Ն. Սիմոնյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Հայերենը բայականտրոն լեզու է, և պատահական չէ, որ բայը հայ լեզվաբանության մեջ ենթարկվել է մանրազնին քննության: Սակայն բայական համակարգին առնչվող շատ իրողություններ կարիք ունեն նորովի դիտարկվելու, եղած տարակարծությունները արժևորելու, տարամետ մոտեցումներից ճշգրիտը գտնելու և գիտականորեն հիմնավորելու առումներով: Սա վերաբերում է ինչպես բայի դիմավոր, այնպես էլ անդեն ձևերին:

Գրաբարի անցյալ և ապառնի դերբայների քննությունը լեզվաբանական աշխատություններում կատարված է այնքանով, որքանով պահանջում է բայի անդեն ձևերի տեսական վերլուծությունը: Սակայն նրանց համաժամանակյա և տար- ժամանակյա ուսումնասիրությունը կարևոր և անհրաժեշտ է՝ ամբողջացնելու համար բայական համակարգի կարևորագույն մասը կազմող դերբայների ձևաբանական, շարահյուսական և դրանցից բխող ոճական հատկանիշների քննությունը:

Անցյալ դերբայը գրաբարում բազմիմաստ էր՝ համարժեք արդի հայերենի վաղակատար և հարակատար դերբայներին, որոնց ձևավորումը միջին հայերենում հիմք հանդիսացավ սահմանական եղանակի նոր բաղադրյալ ժամանակաձևերի հարացույցների ձևավորման համար: Այդ կառույցներն անցան նոր գրական հայերենի երկու տարբերակներին, բայց տարբեր նկարագրով: Այս ամենի մեկնաբանումը, նրանց ծագումնաբանական հիմքերի վերհանումը, եղած մոտեցումների ճշգրտումն այսօր հույժ կարևոր է դերբայական համակարգի ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա արժևորման համար:

Ընտրված թեման արդիական է նաև նրանով, որ այն ներկայացնում է լեզվի զարգացման ընթացքում տեղի ունեցող տեղաշարժերը անկախ և կախյալ դերբայների սահմանագծում և ամբողջացումը է հայերենի բայական համակարգում գլխավոր և մասամբ նաև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի հիմնամասը կազմող կառույցների ձևավորման և զարգացման պատմությունը:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏՎԱԿ Է՝**

1) Բացահայտել հին հայերենի անցյալ և ապառնի դերբայների ձևագործա- ռական բնութագիրը և ցույց տալ նրանց կրած փոփոխությունները հայերենի զար- գացման հետագա փուլերում՝

ա) V դարի մատենագրության մեջ,

բ) VI-XI դդ. մատենագրության մեջ,

գ) XII- XVII դդ. գիտական և գեղարվեստական գրականության մեջ,

դ) ժամանակակից հայերենի գրական երկու տարբերակներում:

2) Քննել անցյալ և ապառնի դերբայների գործառույթները լեզվի ձևաբա- նական և շարահյուսական մակարդակներում:

3) Վեր հանել այդ դերբայների ոճական առանձնահատկությունները լեզվի զարգացման տարբեր շրջաններում :

4) Ցույց տալ այդ դերբայներով կազմված դիմավոր ժամանակաձևերի կառուցատիպերը լեզվի զարգացման տարբեր փուլերում:

5) Համաժամանակյա քննությամբ ցույց տալ նրանց ձևաբանական, շարահյուսական և ոճական հատկանիշները՝ բացահայտելով այն նորմերն ու բացառությունները, որոնք բնորոշ են եղել նրանց՝ իբրև ձևաբայի և դերբայի:

6) Տարժամանակյա քննությամբ ներկայացնել նրանց կրած փոփոխու- յունները միջին և նոր գրական հայերենի երկու տարբերակներում:

7) Կատարել անցյալ և ապառնի դերբայների ձևագործառական հատկա- նիշների վիճակագրություն՝ ըստ լեզվափուլերի:

**ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ:**

Նյութի քննությունը կատարվել է արտահարաբերակցային, զուգադրական-վերլուծական, վիճակագրական և նկարագրական մեթոդների զուգորդմամբ՝ ձևերի քննությունից անցնելով իմաստային քննությանը<sup>1</sup>:

Համեմատական և վերլուծական մեթոդների համադրմամբ կատարվել է անցյալ դերբայի՝ իբրև ձևաբայի և դերբայի (անկախ և կախյալ դերբայ), և ապառնի դերբայի՝ իբրև ձևաբայի ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա արժևորում:

**ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Գրական հայերենի զարգացման երեք շրջանները ներկայացնող մատենագրության տարբեր ժանրերի երկերի ընձեռած փաստերի հիման վրա աշխատանքում տրվում է գրաբարի անցյալ և ապառնի դերբայների պատմական զարգացումը ձևաբանական, շարահյուսական և ոճական հատկանիշների կարևորմամբ:

Միջին հայերենում ձևավորված հարակատար դերբայի գնահատականն առ այսօր վիճահարույց է: Տարակարծությունների գիտական մոտեցման մեկնաբանման համար կարևոր է գրաբարի անցյալ դերբայի՝ իբրև անկախ դերբայի իմաստագործառական հատկանիշների մանրակրկիտ վերլուծությունն ու մեկնաբանումը, որով կհիմնավորվեն արևմտահայերենում և արևելահայերենում գրաբարի անցյալ դերբայի ձևաբանական և շարահյուսական տարբեր դրսևորումներն ու նրա գործառույթների իմաստաբանական հիմքերը:

Գրաբարի ապառնի դերբայի տարժամանակյա քննությունը ցույց է տալիս հայերենի դերբայների կառուցվածքային կապը, հիմնավորում, որ լեզուն ամբողջական, կառուցվածքային կուռ համակարգ է, որի մակարդակների միավորների փոփոխությունները փոխկապակցված են: Սրա դրսևորումն է միջին հայերենում անորոշ դերբայից ապառնի դերբայի նոր կառույցների ձևավորումը:

Վերոհիշյալ հարցերի ամբողջական քննությունը և մանրակրկիտ ու նորովի մեկնաբանումը առաջին անգամ ցույց է տրվում սույն աշխատանքում:

**ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ:**

Այս ուսումնասիրությունը տեսականորեն ամբողջացնում է գրաբարի անցյալ և ապառնի դերբայների գիտական նկարագրությունը համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներով և կարող է նպաստել հայերենի բայական համակարգի տեսության ամբողջացմանը:

Հետազոտության փաստական նյութը և արդյունքները գործնականում կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության, ինչպես նաև պատմական ոճաբանության հետազոտողների համար, կարող են նաև օգտագործվել բուհական համակարգում համապատասխան դասընթացներ կազմելիս:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐԸ:** Ուսումնասիրությունն ընդգրկում է գրական հայերենի զարգացման երեք շրջանները: Հիմք է ընդունվել հայոց լեզվի գիտական հետևյալ շրջանաբաժանումը՝ հին հայերեն (V-XI դդ.), միջին հայերեն (XII-XVI դդ.), նոր գրական հայերեն (XVII- առ այսօր)<sup>2</sup>:

Աշխատանքում անցյալ և ապառնի դերբայների համաժամանակյա քննություն է կատարվում հին հայերենի նախ՝ դասական ենթաշրջանի լեզվական նյութերի հիման վրա, ապա տրվում են նրանց հետագա փոփոխությունները: Տարժամանակյա քննությունը կատարելիս, ըստ անհրաժեշտության, հաշվի են

<sup>1</sup> Մանրամասն տես՝ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 5-7:

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 35, 36, 44, 49:

առնվել գրական հայերենի զարգացման այս կամ այն ենթաշրջանը բնութագրող մատենագրության փաստական հարուստ նյութը (օրինակ՝ ետղասական, նախամիջին, վաղ աշխարհաբար), որը կարող է օգնել հիմնովին վերլուծելու քննարկման առարկա հարցերը:

**ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի կողմից: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են տպագրված հոդվածներում:

**ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, վերջում տրված են համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերը: Աշխատանքը համակարգչային 140 էջ է:

**Ներածություն** բաժնում ներկայացվում է անցյալ և ապառնի դերբայների քննության պատմությունը, հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու նշանակությունը, տրվում են տեսական և փաստագրական նյութի՝ մատենագրության ընտրության հիմնավորումը, թեմայի տեսական և գործնական նշանակությունը: Ըստ գրական հայերենի պատմության փուլերի և ենթափուլերի՝ հիմնավորվում է անցյալ և ապառնի դերբայների ձևագործառական հատկանիշների քննությունը հին, միջին և նոր գրական հայերեններում:

Փորձ է արվում ի մի բերել անցյալ և ապառնի դերբայների վերաբերյալ եղած բոլոր տեսակետները՝ սկսած Դիոնիսիոս Թրակացու աշխատության թարգմանությունից և մեկնությունից մինչև մեր օրերը, վերլուծվում, համադրվում են այդ տեսակետները, և ցուցաբերվում են նոր մոտեցումներ:

Ընդհանրացնելով հունարան շրջանի քերականների ըմբռումները (Դավիթ Փիլիսոփա, Մովսես Քերթոզ, Անանուն, Ստեփանոս Սյունեցի, Համամ Արևելցի)<sup>3</sup> գրաբարի դերբայների մասին՝ նշվում է հետևյալը.

1. Անորոշը համարվել է բայի եղանակներից մեկը՝ «աներեւոյթ» անվանումով, և նրան վերագրվել են քերականական կարգեր, որոնք խորթ են հայերենին:

2. Անցյալ, ենթակայական և ապառնի դերբայներն անվանված են «ընդունելութիւն»։ նրանք ընդունում են բայական և անվանական հատկանիշներ:

3. «Ընդունելութիւնը» դիտվել է որպես առանձին խոսքի մաս:

4. Անցյալ և ապառնի դերբայներն օժանդակ բայի հետ կազմել են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևեր, դրանք հունարան քերականները կրկին ներկայացնում են արհեստական կառույցներով:

<sup>3</sup> Տես Ի. Ասիրո, Ասիրոնեւ Օծաւեւոնեւ ը օձոյ նեւձ օձ օբոյ օծաւեւ, Ի օձոյ օծաւ, 1915, էջ 49, 114-115, 175, 265: Ս. Սյունեցու «Յաղագս ընդունելութեան» գլուխը մեզ չի հասել, էջ 214 (ըստ Ն. Ադունցի):

Լատինաբան հեղինակները<sup>4</sup> (Ֆր. Ռիվոլա, Կ. Գալանոս, Ոսկ. Երևանցի, Յ. Կոստանդնուպոլսեցի, Ս. Ջուղայեցի, Յ. Ջուղայեցի, Խ. Կարնեցի, Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիներ, Յ. Շրյոդեր, Մ. Սեբաստացի) դերբայների ձևակազմության և կիրառության ոլորտում տեսնում են բայասեռի տարբերություններ. ապառնի դերբայի -ոց մասնիկով տարբերակին վերագրում են ներգործական, ի-ով տարբերակին՝ կրավորական նշանակություն, իսկ անցյալ դերբայի ցոյական հիմքով ձևերը (-եցեալ) համարում են կրավորական, ներկայի հիմքով ձևերը (-եալ)՝ ներգործական:

XVIII դարի առաջին կեսին արդեն իսկ նկատվում էր քննադատական վերաբերմունք լատինաբան քերականությունների նկատմամբ (Մ. Չամչյան, Արսեն Բագրատունի, Ա. Այտընյան, Ստ. Պալասանյան և ուրիշներ)<sup>5</sup>:

Դերբայների տեսակների ձևագործառական արժեքի հարցում նորովի մոտեցումներ են ցուցաբերում հետագայի (և մեր ժամանակների) լեզվաբաններ Մ. Աբեղյանը, Յ. Աճառյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Սևակը, Ա. Աբրահամյանը, Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը, Յ. Օհանյանը, Մ. Ասատրյանը, Գ. Ջահուկյանը էդ. Աղայանը Ալ. Մարգարյանը և ուրիշներ<sup>6</sup>:

**Գլուխ առաջին: Անցյալ դերբայը հայերենում:** Առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից՝

---

<sup>4</sup> Տես՝ ա) Յոհ. Կոստանդնուպոլսեցի, Ջտուփին հայկաբանութեան, Դոմ, 1674, էջ 152:

բ) Ֆ. Ռիվոլայի, Ոսկան Երևանցու, Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների աշխատությունների վերաբերյալ տեղեկություններ քաղվել են Գ. Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն» (Ե., 1974) գրքից, էջ 20, 80, 172-174:

գ) Գիրք որ կոչի քերականութիւն, արարեալ և շարադրեալ ի Սիմեօն վարդապետ Ջուղայեցոյ, Կոստանդնուպոլիս, 1725, էջ 111-115: դ) Յ. Սիրոզյան, Դովհանես Ջուղայեցու «Քերականութիւն»-ը, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 1993, էջ 116-117:

ե) Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի Դայկագեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 357: Յմնտ. Վ. Դամբարձունյան, Լատինաբան հայերենի պատմություն, Ե., 2010, էջ 291:

զ) Կղեմես Գալանոս, Քերականական և տրամաբանական ներածութիւն առ իմաստասիրութիւնն շահելոյ, Դոմ, 1645, էջ 102-104:

է) Յոյան Շրյոդեր, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, էջ 114-117, 140-147:

ը) Խ. Արզրումեցի, Գիրք քերականութեան, Յալիօռնայ, 1696, էջ 93, 96:

<sup>5</sup> Տես Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 243-248, Արսեն Բագրատունի, Դայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 208, Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կան արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 100-101, Ստ. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Վենետիկ, 1779, էջ 153-170:

<sup>6</sup> Տես Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 59, 100, նույնի՝ Դայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 131, 132: Ա. Ղարիբյան, Դայոց լեզվի քերականության դասագիրք, Ե., 1941, էջ 180-181, Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 286-287, նույնի՝ ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Ե., 1939, էջ 151-156, 175: Ա. Աբրահամյան, Դայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Ե., 1953, նույնի՝ Բայոց ժամանակակից հայերենում, Ա, Ե., 1962, էջ 363: Ա. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Յ. Օհանյան, ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974, էջ 326: Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 221-227, նույնի՝ ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Ե., 1973, էջ 217, Ալ. Մարգարյան, Դայոց լեզվի քերականություն, Ե., 2004, էջ 392, 401: Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի անդեն բայերը («դերբայները»), Բանբեր Եր. համ.-ի, N 3, 1975, էջ 45-49: Յ. Աճառյան, Լիակատար քերականություն..., հ. V, Ե., 1965, էջ 56-57: էդ. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 344-345:

**1.1. Ենթագլխում («Անցյալ դերբայի ձևագործառական հատկանիշները հին հայերենում»)** տրվում են անցյալ դերբայի ձևաիմաստային դրսևորումները V-XI դարերի մատենագրության մեջ:

Քանի որ գրաբարի անցյալ դերբայը բազմիմաստ էր՝ համարժեք արդի հայերենի վաղակատար և հարակատար դերբայներին, ուստի քննվել են նրա՝ և՛ իբրև ձևաբայի (կախյալ դերբայ), և՛ իբրև դերբայի (անկախ դերբայ) դրսևորած հատկանիշները:

## **Ա. Անցյալ ձևաբայը գրաբարում**

**ա) Անցյալ դերբայ+եմ օժանդակ բայ կառույցներ:** Իբրև ձևաբայ՝ անցյալ դերբայը օժանդակ բայի խոնարհված ձևերի հետ կազմում է գրաբարի սահմանական եղանակի վաղակատար-հարակատար ներկա՝ «Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տերութեանն» (Եղ., 8): «Անուն իմ ի վերայ ձեր կոչեցեալ է» (Ազ., 100), վաղակատար-հարակատար անցյալ՝ «Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին» (Կոր., 140): «Որպէս առաջնոյ մարդոյն մինչև չև յանցուցեալ էր՝ հնազանդ էին» (Կողբ., 72), և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի<sup>7</sup> ժամանակաձևերը՝ «Եթէ յաջողեալ իցեն ի մեծութեան եւ փափկանան ուրախութեամբ ի պակասելի կեանս» (Եղ., 111): «Որ կացեալ իցեն յսիի քուն և պահեալ իցեն զիրամանս քո» (Ազ., 100):

**Անցյալ դերբայ+օժանդակ բայ (եմ. էի, իցեմ)** կառույցները հանդես են գալիս իբրև ստորոգյալ. ինչպես՝ «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ» (Եղ., 100): «Որ ի ձեզ արմատացեալ են և պատեալ զստոովք մտաց ձերոց» (Ազ., 286): «Քանզի ամենայն անձն երկիրդ և կամաւ լսէր հրամանի նորա, իբրև թագաւորի, որ կարգեալ իցէ յԱստուծոյ ի վերայ երկրի» (Փարպ., 364):

Ընդ որում, ներգործական սեռի բայերը կարող են նույն ձևով արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ, ինչպես՝ «Առաքեալ եմ առաջի նորա» (Ազ., 240): «Ձորս տուեալ է ձեզ յԱստուծոյ, և օտար տերանց ծառայեալ» (Քուզ., 250):

**բ) Անցյալ դերբայով և լինիմ, կամ, գոմ, ունիմ բայերով կազմված ժամանակաձևեր:** Գրաբարի վերլուծական ժամանակների կազմում անցյալ դերբայի հետ որպես օժանդակ բայ կարող են գործածվել նաև լինիմ, ունիմ, կամ, երբեմն էլ՝ գոմ բայերը, ինչպես՝ «Յրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելովք յեկեղեցւոյն» (Կոր., 114): «Վասն զի մանաւանդ բազում մշակք տեառն խափանեալ կան (խափանվել են)» (Քուզ., 160): «Որպէս զի կրկին աչս ստացեալ ունիցիմ» (Եղ., 113): «.....և ոչ գոյր ընդդիմացեալ թագաւորին....» (ոչ ոք չկար թագավորին դիմադրող) (Քուզ., 202):

**գ) Անցյալ դերբայով վերլուծական ժամանակաձևերի և ենթակայի համաձայնությունը:** Անցյալ դերբայ+եմ. էի, իցեմ, լինիմ կառույցների հետ ենթական դրվում է ոչ միայն ուղղական, այլև սեռականով հոլովով: Դմնտ. «Եւ քարին՝ թէ քո իսկ է ծնեալ զմեզ (դու ես մեզ ծնել)» (Ազ., 188): «.....եթէ ոչ երբէք լեալ է Ձրուանայ հայր աստուածոց (որ երբէք չի եղել Ձրվանը աստվածների հայրը)....» (Կողբ., 104): «Քանզի այնպէս արկեալ էր Աստուծոյ (Աստված զցել էր) զսի և զերկիրը զօրավարին

---

<sup>7</sup> Որոշ քերականագետներ (Ս. Գաբամաճյան և Ստ. Մալխասյանց) անցյալ դերբայ+իցեմ կառույցն անվանել են ստորադասական անցյալ՝ ժամանակային այդ կառույցում շեշտելով դերբայի իմաստը: Տես Ս. Գաբամաճեան, Նոր քերականութիւն հայերէն գրաբար լեզուի, Կ. Պոլիս, 1897, էջ 181: Ստ. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 42:

Հայոց Վահանայ Մամիկոնէի» (Փարպ., 372): «Զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչև **ձեր խնորեալ** ինչ **իցէ** ի նմանէ» (Մատթ.Ձ., 8): «Եւ զայն **մոռացեալ իցէ նոցա**՝ որք զայս կամին» (Թուղթ Պետրոսի, 2-րդ Գ, 5): «**Շնորհեալ լինէր քո** մեզ զկեանս անցաւս...» (Ազ., 50): «...Ի հատուցմանէ անտի յանդիմանութեանն **գտեալ լինէր նոցա...**» (Ազ., 316-317):

5-րդ դարի որոշ մատենագիրների երկերում **անցյալ դերբայ+օժանդակ բայ, անցյալ դերբայ+ունիմ, կամ, լինիմ** կաղապարով կառույցները գործածված են հետևյալ հաճախականությամբ.

Աղյուսակ 1

5-րդ դար	անցյալ դ. +են	անցյալ դ. +էի	անցյալ դ. +իցեմ	անցյալ դ. +լինիմ	անցյալ դ. +կամ	անցյալ դ. +ունիմ
Ազաթանգեղոս	117	146	39	43	28	8
Եղիշե	138	154	23	10	12	3
Ղ. Փարպեցի	167	144	6	23	10	4
Եզ. Կողբացի	70	71	21	5	9	2
Կորիւն	1	5	4	4	2	3

### Բ. Անցյալ դերբայն իբրև անկախ դերբայ

**ա) Անցյալ դերբայը դիմավոր բայի իմաստով:** Գրաբարում անցյալ դերբայը, բացի բաղադրյալ ձևերում հանդես գալուց, գործածվում է նաև առանց օժանդակ բայի և «ինքնին միայնակ վարի յաճախ փոխանակ դիմաւոր բայի»<sup>8</sup>, ինչպես՝ «**Արարեալ** զերկինս խորամարդ հաստահարկ, և զերկինս **կախեալ** զոչնչէ, և զերկիրս ի վերայ ոչնչի **կացուցեալ**» (Ազ., 134):

Անցյալ դերբայի՝ դիմավոր բայի իմաստով կիրառությունները կենսունակ են 5-րդ դարի մատենագրության մեջ: Ըստ հաշվումների՝ Ազաթանգեղոսի երկում դրանց թիվը կազմում է **1068** բայածև (ամբողջ երկի 2655 բայածևից), Ղ. Փարպեցու երկում՝ **899** (2889 բայածևից), Եղիշեի երկում՝ **217** (956 բայածևից), Կորյունի երկում՝ **188** (398 բայածևից), Եզ. Կողբացու երկում՝ **101** (633 բայածևից):

Անցյալ դերբայի՝ հին հայերենում տարածված գործածություններից է դիմավոր բային զուգահեռ գործածությունը (անցյալ դերբայ+դիմավոր բայ կառույցում), որում այն կարող է թարգմանվել կամ անորոշ դերբայի գործիական հոլովով, կամ իրեն հաջորդող դիմավոր բային համարժեք հարացուցային միավորով, ինչպես՝ «Եւ զամենայն նախարարսս Հայոց ընդ նմա **գումարեալ**՝ զայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից» (Բուզ., 236), «Զայն իբրև թագաւորն՝ յոյժ **ցնծացեալ բերկրեցաւ** (ցնծաց և ուրախացաւ)....» (Եղ., 48): «Եւ **փութացեալ գնայր** (շտապեց գնաց) հանդերձ աշակերտօք բազմօք անցանել ի կողմանս Յունաց....» (Կոր., 96):

**բ) Անցյալ դերբայի անվանական գործառույթները:** Անցյալ դերբայը հոլովվում է՝ ենթարկվելով անվանական Ո հոլովման, և դրսևորվում է հոլովման հարացույցի միավորներից յուրաքանչյուրին բնորոշ գործառույթներով:

<sup>8</sup> Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 119:



Այնուհետև տրվում է անցյալ դերբայի շարահյուսական կիրառությունների վիճակագրական աղյուսակ՝ 1-200 էջի սահմաններում՝ ըստ 5-րդ դարի չորս մատենագիրների (Բուզանդ, Ագաթանգեղոս, Փարպեցի, Կորյուն, վերջինս ներկայացված է ամբողջությամբ):

Աղյուսակ 2

V դար	ովմոթեմ	դրոշին	հատկացու լցին	բացահայտ տեխ	ուղիղ խնդրոլ	հանգ. ամուղո.	միջոցի խնդ.	միասնությ ան խնդ.	անջատմ ան խնդ.	վերաբ. խնդ.	նպատ. պարուզ.	պատմ. պար.	ձևի պարազա	ժամ.	պարագա տեղի	պարազա	հիմունքի պարագա
Բուզանդ	15	81	10	1	32	20	1	1	3	-	1	2	155	26	2	2	
Ագաթ	11	121	3	6	21	12	0	-	1	1	5	4	132	52	1	-	
Փարպ.	13	117	4	6	32	4	0	-	6	1	2	-	407	102	1	3	
Կորյուն	1	36	8	1	8	16	1	-	2	-	1	-	83	12	-	-	

**1.1.2. Անցյալ դերբայը VI-XI դարերում:** Աշխատանքում ներկայացված VI-XI դարերի մատենագրության վիճակագրական տվյալները փաստում են, որ անցյալ դերբայը մինչև 10-րդ դար փոփոխության չի ենթարկվել:

Հետաքրքիր է, որ **-ել-**ով ձևերը սկսվել են գործածվել բացառապես 10-րդ դարից: Այս շրջանում հանդիպում են անցյալ դերբայից առաջացած վաղակատարի գործածության դեպքեր կարծեցյալ Շապուհ Բագրատունու «Պատմութիւն» երկում, հմմտ. «Գոհանամ գևստուծոյ իմոյ, որ զիս անչափ **մեծացուցել է**» (էջ 183): «.....ո՛վ ազատք իմ սնուցածք, այս արւ **եմ պահել** զձեզ» (էջ 121): «.....և յորժամ **է եկել** դայ ի դուրն իմ և կամ ո՞րպէս ապրի» (էջ 183), «.....բազում անգամ **մտել եմ** ես աշխարհն Ալանաց» (էջ 77):

Ա. Աբրահամյանի կարծիքով հիշյալ երկում վաղակատարի ձևերի առկայությունը գրչագրական սխալի արդյունք չէ, քանի որ երկի լեզուն հագեցած է բարբառային ձևերով<sup>9</sup>:

**1.1.3. Անցյալ դերբայի ոճական-շարահյուսական առանձնահատկությունները հին հայերենի մատենագրության մեջ:** Հետազոտության մեջ անդրադարձ է կատարվել անցյալ դերբայի ոճական առանձնահատկություններին V-XI դարերի մատենագրության շրջանակներում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում անցյալ դերբայով արտահայտված հոմանշային **կրկնությունները**, հմմտ. «Իսկ իբրև ետես զայս եղբայրն քերահաւատ կրօնաւոր, **զարհուրեալ դողացեալ խռովեալ տազնապեալ** յերկիր կործանեալ կայր, ի բերանս **հարեալ, պարտեալ թալացեալ** ոգին **սպառեալ** յինքենէ» (Բուզ., 344): «Իսկ հանդերձիկն որ զնոքօք արկեալ՝ այն ցեցակեր **մեցուտեալ փխրեալ եղծնեալ մաշեալ կորուսեալ** ապականին» (Ագ., 288):

Ոճական դրսևորումներից հետաքրքիր են թ. Արծրունու երկում հանդիպած հետևյալ օրինակները, երբ մինևույն բայն է կրկնվում, ինչպես՝ «..... **եկեալ եկաց**

<sup>9</sup> Հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 176: Պետք է համաձայնել Ա. Աբրահամյանի մոտեցմանը, քանի որ սրանք գրչագրական սխալներ լինել չեն կարող, այլ ձևային իմաստով նոր կառույցներ են՝ առաջացած եալ>ել հնչյունափոխությամբ:

առաջի ոսխ վիրագին» (էջ 216): «...անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն քրիեղեղին» (էջ 336):

7-11-րդ դարերում անցյալ դերբայը հանդիպում է նոր դարձվածային միավորների կառուցվածքում, ինչպես՝ «...և **վերացեալ ալեօք** եկն ի գլուխ» (ՀՄ, 30): «...և **մտեալ ի ռազմն** ցրուեաց գժողովեալսն» (ՀՄ, 47): «...սակայն **զմահն և զկեանս առաջի եղեալ**» (ՀՄ, 13): «...**յաւեր դարծուցեալ** զՅրեաստան» (ԹԱ, 104):

Ոճական յուրահատուկ դրսևորում ունի անցյալ դերբայը՝ հանդես գալով անդեն նախադասության գլխավոր անդամի դերում<sup>10</sup>. «Արդ ձեր **թողեալ** զԱստուած, **և յիշեցուցեք** զչարինն ձեր զառաջինս, **և լցեք** զչափ մեղացն հարցն ձերոց» (Բուգ., 64)՝ (Թողիք Աստծուն և կրկնեցիք...):

**1.2. Ենթադիտում («Անցյալ դերբայի ձևագործառական հատկանիշները միջին և նոր գրական հայերեններում»)** քննվում են անցյալ դերբայի ձևային փոփոխությունները և գործառական առանձնահատկությունները միջին և նոր գրական հայերեններում:

Աշխատանքում վկայված արձակ և չափածո սկզբնաղբյուրների հիման վրա կատարված վիճակագրական տվյալներով ցույց է տրվում անցյալ դերբայի ձևային և իմաստային երկփեղկումը վաղակատար (-ել, -եր) և հարակատար (-ած) դերբայների: Դժվար է ասել, թե որ հեղինակն է առաջինը անցյալ դերբայը գործածել -ել կամ -եր վերջավորությամբ, բայց այն, որ 12-16-րդ դարերում հաճախադեպ են կիրառվում անցյալ դերբայի -ել և -եր վերջավորությունները, փաստ է: Այդ մասին են վկայում ատենախոսության մեջ ներկայացված վիճակագրական տվյալները, օրինակներ՝ «Եւ ստածէ զամէն մէկ իւր բժշկութեամբն, որպէս **յիշել են**» (ՄՅՏՄ, 31): «Գոհանամ զԱստուծոյ իմոյ, որ զիս անչափ **մեծացուցել է**» (ՊԱԶ, 183): «Եւ ամէն բժշկապետին **ասել են**» (ԱՍՕԲ, 158): «Եղկելի **են դարձեր** և թշուառական» (ԽԿ, 24):

Միջին հայերենում վաղակատար դերբայը -ել և -եր վերջավորություններով, ինչպես նաև նրանով կազմված բաղադրյալ ժամանակածներն արդեն հիմնական տեղ են գրավում խոնարհման համակարգում: Հարակատար դերբայի իմաստի արտահայտման համար միջին հայերենն արդեն ուներ -ած մասնիկով ձևեր: Այսպիսով՝ գրաբարի անցյալ դերբայի դիմաց ստեղծվում է երեք ձև՝ -ել, -եր, -ած մասնիկները:

Քննական-վերլուծական աշխատանքից հետո տրվում է միջինհայերենյան շրջանում անցյալ դերբայի -եալ, -ել, -եր, -ած վերջավորություններով դերբայների գործածության հաճախականության աղյուսակ.

Աղյուսակ 3

12-16-րդ դդ	ան ց. դ. ան կա խա բ.	անց յալ <b>դ+օժ</b> . բայ	անց.դ.+ լինիմ	անց. դ.+ կամ	անց. դ.+ ունիմ	ել+ օժ. բայ	եր+օ ժ. բայ	ած+ օժ. բայ	ած վերջ. ան կա խաբ.
-------------	--	------------------------------------	------------------	--------------------	----------------------	-------------------	-------------------	-------------------	---------------------------------

<sup>10</sup> Տե՛ս Թ. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Ե., 2007, էջ 45:

Ն,Շնորհ.(եր գեր)	263	14	2	5	2	-	-	6	19
Վարդան Մեծ	108 2	128	19	4	3	8	-	3	11
Ֆրիկ	35	4	1	1	-	178	16	56	58
Խ. Կեչառ.	270	22	3	5	3	3	9	8	13
Գ. Աղթամ.	293	37	1	3	1	13	27	6	19

Բաղադրյալ ժամանակաձևերի կազմության եղանակները միջին հայերենում համակարգված չէին, դրա պատճառը կարող էին լինել պետական գրական լեզվի անմիասնականությունը, բարբառային տարանջատվածությունը, ուստի հաճախ միևնույն ստեղծագործության մեջ և ավելին՝ միևնույն նախադասության մեջ միջին հայերենով գրող հեղինակները զուգահեռաբար գործածում էին դերբայական երկու ձևերն էլ, ինչպես՝ «...և այն զօղվածն որ աստուած ի մարդուն պիտան է **ստեղծեր**՝ նա զինքն Բ է **ստեղծել**» (ԱԱՕԲ, 32): «Չերն վայելուչ և գռուզ **եկել**...Որ **չէ տեսել** էն ցեղ գիտուն» (ՆՇ, 574): «Հանց զինեխում մարդ **չէ տեսեր**» (ՆՇ, 567):

Վաղ աշխարհաբարի շրջանում ևս գրաբարի անցյալ դերբայը չնայած երկփեղկվել էր վաղակատար և հարակատար դերբայների, այնուամենայնիվ շարունակվում է կիրառվել իրեն հատուկ ձևագործառական առանձնահատկություններով:

Այսպիսով, գրաբարի անցյալ դերբայը միջինհայերենյան շրջանում ունեցել է որակական տեղաշարժեր: Նրա հիմքի վրա առաջացան վաղակատարը (արևելահայերենում՝ **-ել**, արևմտահայերենում՝ **-եր** վերջավորություններով), և հարակատարը (-ած մասնիկով), որոնք լեզվական կիրառությունների հստակեցման հետևանքով արդեն տարրորոշված դրսևորումներ ունեցան:

Աշխարհաբարում անցյալ դերբայը հանդես է գալիս **-ել**, **-եր** վերջավորություններով՝ կազմելով սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերը՝ գրել են- էի (արևելահայերեն), գրեր են-էի (արևմտահայերեն):

Վաղակատար դերբայը աշխարհաբարում ձևաբայ է:

Անցյալ դերբայի մեջ «ամփոփված» հարակատար դերբայը, որն արդեն միջին հայերենում ուներ **-ած** վերջավորություն և մասնակցում էր խոնարհման հարացույցին՝ կազմելով սահմանական եղանակի հարակատար ներկա և հարակատար անցյալ՝ **նստած են-էի** ժամանակաձևերը, բնորոշ է նաև արևմտահայերենին, բայց արևելահայերենում մոտեցումները տարբեր են. լեզվաբանների մի մասի կարծիքով այն նաև ձևաբայ է, մյուս մասը մշում է, որ այն միայն անկախ դերբայ է և չի մասնակցում խոնարհման հարացույցին: Մինչդեռ պետք է ընդունել այն ակադեմիական մոտեցումը, որ այն անկախ դերբայ է, իսկ նրանով և օժանդակ բայով կազմված կառույցները բաղադրյալ ստորոգյալներ են:

**Գլուխ երկրորդ: Ապառնի դերբայը հայերենում:** Այն բաղկացած է չորս ենթազույգումներից:

**2.1. Ենթազույգում («Գրաբարի ապառնի դերբայի քննությունը V դարի մատենագրության մեջ»)** խոսվում է գրաբարի ապառնի դերբայի **-ոց** և **-ի** վերջավորությունների ծագման մասին:

Ատենախոսության մեջ առանձին ենթակետերով քննվում են **-ոց** և **-ի** վերջավորությամբ դերբայական ձևերի բոլոր կիրառությունները՝ ըստ բայական սեռերի, և պարզվում, որ՝

1. Գրաբարի **-ոց** մասնիկով ապառնի դերբայը հանդես է գալիս բայի եղանակային ձևերի կազմության մեջ և **են** օժանդակ բայի հետ կազմում է

բաղադրյալ ժամանակաձևեր: Ըստ այդմ՝ գրաբարի քերականության մեջ **ապառնի դերբայ (-ոց տարբերակով)+օժ.բայ** կաղապարով կազմվում են երեք բաղադրյալ ժամանակաձևեր՝ ա) **սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի**՝ «....գոր և գայր ևս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես» (Եղ., 274), բ) **սահմանական եղանակի անցյալ ապառնի**՝ «....գոր հռչակելոց էր գնահատակութիւն որ առ Աստուած ի դուրս յախտենից» (Փարպ., 126), գ) **ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի**՝ «....զի՞արդ առնէր գայն գոր ոչն գիտէր՝ թէ որպիսի ինչ ոք լինելոց իցէ» (Կողբ., 38):

2. **-ոց մասնիկով ապառնի դերբայ+օժանդակ բայ** կառույցը V դարի մատենագրության մեջ գործածվում է իբրև պարզ ստորոգյալ, ինչպես՝ «Եւ ընդէ՞ր ասիցէ Առաքեալ՝ թէ **հնազանդելոց է** փրկչին մերուն հանդերձ մահուամբ և սատանայ, և **անկանելոց է** յիշխանութեն և ի պետութեն իւրմէ՝ որ աստուածնալն անձամբ կամեցաւ» (Կողբ., 148): «Այլ զի **գալոց իջանելոց էր** Աստուածորդին և զամենայն ազգս **վերացուցանելոց էր** յԱստուածութիւնն» (Ազ., 342):

3. Գրաբարի **-ի մասնիկով ապառնի դերբայը** չի մասնակցում բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը, այն հանդես է գալիս օժանդակ բայի երրորդ դեմքի հետ՝ կազմելով միադիմի բայ, դառնալով բաղադրյալ ստորոգյալ, ինչպես՝ «Նոյնպէս և զԱստուծոյն **իմանալի է՝** (այսպես էլ պետք է իմանալ) թէ ես ներելովմ իմով եղէ պատճառք խտտանալոյն մորա» (Կողբ., 134): **-ի մասնիկով ապառնի դերբայ+օժանդակ բայ** կառույցը արտահայտում է ներգործական, կրավորական և չեզոք սեռի իմաստներ, իսկ ապառնի դերբայի հետ գործածվող օժանդակ բայն արտահայտում է «պետք է», «հարկավոր է», «արժանի է» իմաստ՝ «Քանզի և մանուկ՝ կաթնակեր որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ **պատժելի է՝** այլ **արգահատելի**» (կրավորական) (Կողբ., 40): «...և ամենեցուն **գիտելի** (ներգործական) և ծանօթ **էին** գործք մոցա» (Բուզ., 334): «...ապա եթէ գայն չգիտաց, զիս՞ող **իցէ հաւատալի՝** (չեզոք) եթէ զմիւսն ծանեալ» (Կողբ., 100):

4. **-ի մասնիկով ապառնի դերբայը** հիմնականում գործածվում է անկախաբար՝ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով. «Եւ արդ եկեալ **յիշելին (ենթակա)** մերծ ի թագաւորական քաղաքին» (Կոր., 102): «Այր էր սա մեծ և բարձր **ցանկալի** հասակաւ, և վայելուչ գեղով....**տենչալի ցանկալի և զարմանալի և նախանձելի (որոշիչ)** արութեանն ի զինուորական կրթութեանն» (Բուզ., 108):

5. Գրաբարում **-ի մասնիկով ապառնի դերբայը** բայական հասկացություն էր, սակայն որոշ բնագրային օրինակներից պարզ է դառնում, որ այս տարբերակում ապառնիության գաղափարը շատ դժվար է տարբերակել. դերբայների մեծ մասը ձեռք է բերել գոյականական, մեծ մասամբ, ածականական արժեք, իզուր չէ, որ որոշ քերականներ ապառնի դերբայի այս տարբերակը հանում են դերբայների շարքից և համարում բայածական<sup>11</sup>:

**2.2. Ենթազլխում («Գրաբարի ապառնի դերբայը VI-XI դարերի մատենագրության մեջ»)** քննվում են ապառնի դերբայի կիրառությունները այդ դարաշրջանին բնորոշ մի շարք գրավոր աղբյուրների հիման վրա, արվում են եզրահամագումներ.

1. **-ոց մասնիկով ապառնի դերբայը** շարունակում է մասնակցել բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը:

2. **-ոց մասնիկով ապառնի դերբայ+օժանդակ բայ** կառույցը 5-րդ դարի համեմատ շատ ավելի քիչ է գործածվում այս դարաշրջաններում, որն էլ հիմք է

<sup>11</sup> Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 208, Մ. Աբեդյան, Գայոց լեզվի տեսություն, էջ 255, Զ. Աճառյան, Լիակատար քերականություն..., հ. V, էջ 21:

տալիս ենթադրելու, որ **-ոց** մասնիկը աստիճանաբար իր տեղը զիջում է ապառնի դերբայի նոր տարբերակին՝ **-ոյ** վերջավորությամբ, որն էլ հնչյունափոխությամբ հետագայում դարձել է **ու**<sup>12</sup>:

3. Ապառնի դերբայի **-ի** մասնիկով տարբերակն այս դարաշրջանում հանդես է գալիս գալիս օժանդակ բայի հետ՝ կազմելով միադիմի բայ, ինչպես նաև ունի անկախ կիրառություն. «...ի բաց հրաժարելով յառաջին **ըստգտանելի** գործոց» (ՄԿ, 27): «...**ընդունելի** է քեզ այդ չափ աշխատանք քո» (ՀՄ, 151):

Ամփոփելով ապառնի դերբայի գործառնությունների քննությունը VI-XI դարերի մատենագրության մեջ՝ նշվում է, որ այն ձևային և իմաստային փոփոխություն չի կրել, սակայն ատենախոսությամբ մեջ վկայված վիճակագրական տվյալները հստակ վկայում են, որ հիշյալ դերբայով կառույցները աստիճանաբար նվազում են:

**2.3. ենթազվիտում («Քրաբարի ապառնի դերբայը միջին հայերենում»)** անդարադարձ է կատարվում ապառնի դերբայի՝ միջինհայերենյան շրջանում հանդես եկած չորս՝ **-ոց**, **-ի**, **-ոյ**, **-ու** տարբերակների քննությամբ:

Ըստ այդմ՝

1. **-ոց** վերջավորությամբ ապառնի դերբայը միջինհայերենյան շրջանում դարձյալ գործածվում է **են** օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի՝ հետ՝ կազմելով **սահմանակալ եղանակի բաղադրյալ ապառնի**՝ «...քէ որոյ անուն շինեցից զեկեղեցիքս իմ, գոր **շինելոցս են**» (ՊՇԲ, 34), և **սահմանակալ եղանակի անցյալ ապառնի**՝ «Երբ հանց ցեղ էր **լինելոց**» (Ֆր., 25), բաղադրյալ ժամանակաձևեր: Այն շարունակվում է գործածվել նույնիսկ միջինհայերենյան երկրորդ շրջանի հեղինակների՝ Ամիրդովլաթ Ամասիացու, Գր. Աղթամարցու, մինչև անգամ ուշ միջնադարյան շրջանում՝ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններում:

2. **-ի** մասնիկով ապառնի դերբայը շարունակում է գործածվել նաև միջին հայերենում՝ օժանդակ բայի հետ հանդես գալով որպես ստորոգելիական վերադիր, ինչպես՝ «Ողորմ ու **լալի** է նա մեջ յամեն սըրբոց՝ սեւերես» (Ֆր., 55), և՛ անկախ կիրառությամբ՝ «...սակայն կանոնք **փոխելի** զախտն ցուցին» (ՄԳԳԴ, 110): Սակայն որպես դերբայ նրա գործածությունը նվազում է, ավելի շատ հանդիպում են գոյականական և ածականական կիրառություններ:

3. **-ոյ** վերջավորությամբ ապառնի դերբայը բավական լայնորեն սկսեց կիրառվեց միջին հայերենում՝ հանդես գալով տարբեր գործածությամբ՝ և՛ օժանդակ բայերի հետ, և՛ անկախ կիրառությամբ, ինչպես՝ «Մեկ օր **գալոյ են** քո քերխանեն» (ՆՀ, 18): «...և **հանգչելոյ** տեղիք շինացին վտանգելոց» (ՍԳԴ, 31): «**Ձերօճելոյ** հրնար իս չըկայ...**զգերելոյ** դարձըն կամենայ» (ԳԱ, 16-17):

4. Միջին հայերենում առաջանում է **-ու** վերջավորությամբ ապառնի դերբայ, պայմանավորված՝ **-ոյ>ու** պատմական հնչյունափոխությամբ: Այստեղից էլ ընդհանրանում և տարածվում է **-ու** վերջավորությամբ մի նոր դերբայ:

Ապառնի դերբայի ձևագործառական հատկանիշները վաղ աշխարհաբարում՝ ըստ XVII-XVIII դդ. ժամանակագրությունների, ունեն հետևյալ վիճակագրությունը. նրա 4 տարբերակներն էլ շատ հազվադեպ են գործածվում, ինչպես՝ Գր. Կամախեցու (XVII դ.) երկում՝ 2 բայաձև (ոց+են, ու+են), Մարտիրոս դի Առաքելի (XVIII դ.) երկում՝ 2 (ի+օժ. բայ, -ոց-ով ձևեր չեն հանդիպել), Աստուածատուր Հովհան, Առաքել Ակնեցիների (XVIII դ.) երկում՝ 1 (ոց+են):

<sup>12</sup> Նշված հնչյունափոխության վերաբերյալ ավելի մանրամասն կանդրադառնանք «Ապառնի դերբայը միջին հայերենում» բաժնում:

**2.4. Ենթազվխում («Գրաբարի ապառնի դերբայը արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներում»)** քննվում են ապառնի դերբայի կազմության վերաբերյալ եղած բնորոշումներն ու տարակարծությունները: Այսպես, որոշ լեզվաբաններ (Ս. Պալասանյան, Ալ. Մարգարյան) ընդունում են ապառնի դերբայի կազմության ընդամենը մեկ ձև՝ **-ու** վերջավորությամբ: Որոշ լեզվաբաններ էլ (Ա. Այտընյան, Ս. Աբեղյան, Գ. Սևակ, Մ. Ասատրյան)<sup>13</sup> **ու**-ից բացի որպես ապառնի դերբայի կազմության միջոց են ընդունում նաև **-ի** և **-իք** մասնիկները:

Ժամանակակից արևելահայերենում և արևմտահայերենում **-ու** մասնիկով ապառնի դերբայն ունի կախյալ գործառույթ և հանդես է գալիս միայն դիմավոր ձևերի կազմության մեջ՝ որպես ձևաբայ: Արևելահայերենում այդ բայաձևերը մասնակցում են սահմանական եղանակի, իսկ արևմտահայերենում՝ հարկադրական եղանակի ժամանակաձևերի կազմությանը: Օրինակներ՝ «Յետս դարման **եմ տանելու**» (ԱԲ, 215): «Անկրկնելի Շուշանեան շատ առաջ եւ շատ կանուխէն ճանչցած **ըլլալու է...**» (ԱԾ, 41): «Գետը գազազուն էր, մի քիչ-մի քիչ էլ ուժ տար՝ գետը **տանելու էր** կայարանապետի...» (ՅՄԵ, 247): «Նամակ մը ստացավ Փանջունի, որով իմաց կը տրվեր թե այլևս եղբորմեն 10-ը փարա **հուսալու չէր**» (ԵՕ, 26): Սիրուշն այստեղ ի՞նչ **էր անելու**» (ՅՄԵ, 159): «...ձևավոր և ճաշակավոր բան մը հագմելու համար քիչ մը ակռան **սխմելու է** մարդս» (ՅՂ, 126):

Մասնագիտական գրականության մեջ կա այն տեսակետը, որ **-ու** մասնիկով ապառնի դերբայը մասնակցում է երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը: Ելնելով լեզվական փաստերի վերլուծությունից՝ պետք է կարծել, որ բաղադրյալ այդ կառուցատիպերում գործածված **-ու** վերջավորությամբ ձևերը անորոշի սեռական-տրական հոլովածներ են և ոչ թե ապառնի դերբայ: Հմնտ. «Սենք որ **կթելու լինինք**, քո միակ այծը չենք կթիլ» (ՂԱ, 35): «Եթե որպես նվեր **ուղարկելու լինիմ**» (ՎՄ, 143):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ գրական հայերենի երեք շրջանների մատենագրության նյութերի համեմատության հիման վրա կատարվել է գրաբարի անցյալ և ապառնի դերբայների տարժամանակյա քննություն և ցույց է տրվել նրանցով ձևավորված բաղադրյալ-վերլուծական ժամանակաձևերի ձևավորման ընթացքը, մյուս կողմից՝ վեր են հանվել նրանց հարացուցային միավորների տարբերությունների հիմքերը գրական հայերենի երկու տարբերակներում:

1. Գրաբարի անցյալ դերբայը կազմվում է և՛ ներկայի, և՛ անցյալ կատարյալի հիմքից՝ **-եալ** վերջավորությամբ: Անցյալ դերբայ ունեն չորս խոնարհումների բոլոր սեռերի պարզ, ածանցավոր, պատճառական և անկանոն բայերը: Որոշ լեզվաբաններ սեռային տարբերակում են կատարել՝ **-եալ** մասնիկով ձևերը համարելով ներգործական, **-եցեալ**-ը՝ կրավորական: Անշուշտ, այս երկու ձևերի մեջ ներգործական և կրավորական սեռերն առանձնացնելը գիտականորեն հիմնավորված չէ:

2. Գրաբարի **ապառնի** դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ **-ոց** և **-ի** վերջավորություններով: Լեզվաբաններից ոմանք, հետևելով լատիներենի քերական

<sup>13</sup> Տե՛ս էր. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Ե., 1939, էջ 184-186, Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, Ե., 2004, էջ 401, Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989, էջ 252-259:

նությանը, փորձում են ապառնի դերբայի վերջավորությունները տարբերակել ըստ սեռերի՝ ներգործականի համար ընդունելով **-ոց** ձևը, կրավորականի համար՝ **-ի**-ով տարբերակը: Սակայն այսպիսի տարանջատումը հիմնավորված չէ. գրաբարի ապառնի դերբայի մասնիկները չեն տարբերակվում ըստ սեռային իմաստների:

3. Ձևաբանական մակարդակում թե՛ անցյալ, թե՛ ապառնի (-ոց մասնիկով) դերբայները օժանդակ բայերի հետ կազմում են բաղադրյալ ժամանակաձևեր՝ հանդես գալով կախյալ գործառույթով՝ իբրև ձևաբայեր:

**Անցյալ** դերբայը **եմ**, **լինիմ** բայերի հետ կազմում է երեք վերլուծական ժամանակաձևեր՝ վաղակատար-հարակատար ներկա, վաղակատար-հարակատար անցյալ և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի: Հիշյալ դերբայը եղանակային ձևեր է կազմում մահ **ունիմ**, **կամ**, **գտանեմ**, **ասեմ**, **կարծեմ**, **երկիմ** բայերի հետ:

ա) Ըստ 5-րդ դարի մատենագրության (Ագաթանգեղոս, Եղիշե, Փարպեցի, Կողբացի, Կորյուն, Բուզանդ)՝ վերոնշյալ կաղապարները գործածվել են հետևյալ հաճախականությամբ՝ **անցյալ դերբայ+եմ՝ 688, անցյալ դերբայ+էի՝ 662, անցյալ դերբայ+իցեմ՝ 148, անցյալ դերբայ+լինիմ՝ 118, անցյալ դերբայ+կամ՝ 111, անցյալ դերբայ+ունիմ՝ 25 (ընդհանուր երկերում գործածված 9222 բայաձևերից):**

բ) Ըստ VI-XI դարերի մատենագրության (Սեբեոս, Ս. Կաղանկատվացի, Հ. Մամիկոյան, Թ. Արծրունի)՝ անցյալ դերբայով կառուցված կիրառվել են հետևյալ հաճախականությամբ՝ **անցյալ դերբայ+եմ՝ 205, անցյալ+էի՝ 437, անցյալ+իցեմ՝ 11, անցյալ+լինիմ՝ 130, անցյալ+կամ՝ 68, անցյալ+ունիմ՝ 28 (ընդհանուր երկերում գործածված 6784 բայաձևերից):**

4. Բաղադրյալ ժամանակաձևերի կազմության մեջ հանդես է գալիս **-ոց** մասնիկով ապառնի դերբայը, որը **եմ** օժանդակ բայի հարակցությամբ կազմում է սահմանական եղանակի ապառնի, անցյալի ապառնի և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակաձևերը:

ա) Ըստ 5-րդ դարի մատենագրության (Ագաթանգեղոս, Եղիշե, Փարպեցի, Կողբացի, Կորյուն, Բուզանդ)՝ վերոնշյալ կաղապարները գործածվել են հետևյալ հաճախականությամբ՝ **ապառնի դերբայ+եմ՝ 134, ապառնի դերբայ+էի՝ 46, ապառնի դերբայ+իցեմ՝ 9:**

բ) Ըստ VI-XI դարերի մատենագրության (Սեբեոս, Ս. Կաղանկատվացի, Հ. Մամիկոյան)՝ ապառնի դերբայով կառուցված կիրառվել են հետևյալ հաճախականությամբ՝ **ապառնի դերբայ+եմ՝ 20, ապառնի+էի՝ 7, ապառնի+իցեմ՝ 1:**

5. Շարահյուսական մակարդակում հիշյալ դերբայներով կազմված դիմավոր ձևերը դառնում են պարզ ստորոգյալներ:

6. Ներգործական սեռի անցյալ դերբայը մեծ մասամբ պահանջում է սեռական հոլովով ենթակա, չեզոք սեռի բայերի դեպքում ևս ենթակայի սեռական հոլովը բացառված չէ, իսկ կրավորական սեռով արտահայտված անցյալ դերբայի ենթական արտահայտվում է ուղղական հոլովով:

7. Անցյալ դերբայն անկախաբար կիրառվելիս հանդես է գալիս շարահյուսական տարբեր պաշտոններով, ինչպես մահ կազմում է դերբայական դարձված: Անցյալ դերբայով կազմված դարձվածները կատարում են ենթակայի, որոշչի, հատկացուցչի, ինչպես մահ ձևի, ժամանակի, պատճառի, զիջման պարագաների շարահյուսական պաշտոններ: Պայմանավորված անցյալ դերբայի իմաստային առանձնահատկություններով՝ ձևի պարագայի և որոշչի կիրառությունները ունեն գործածության բարձր հաճախականություն:

Ըստ 5-րդ դարի չորս մատենագիտների երկերի (Բուզանդ, Ագաթանգեղոս, Փարպեցի, Կորյուն)՝ անցյալ դերբայը հանդես է գալիս հետևյալ շարահյուսական

գործառույթներով (վիճակագրությունը կատարվել է 1-200 էջի սահմաններում, Կորյունի երկը ներկայացված է ամբողջությամբ)՝ **ենթակա՝ 40, որոշիչ՝ 355, հատկացուցիչ՝ 25, բացահայտիչ՝ 14, ուղիղ խնդիր՝ 93, համզման անուղղակի խնդիր՝ 52, միջոցի խնդիր՝ 2, միասնության խնդիր՝ 1, անջատման խնդիր՝ 12, վերաբերության խնդիր՝ 2, նպատակի պարագա՝ 9, պատճառի պարագա՝ 6, ձևի պարագա՝ 777, ժամանակի պարագա՝ 192, տեղի պարագա՝ 4, հիմունքի պարագա՝ 5:**

8. Գրաբարի **-ի** մասնիկով ապառնի դերբայը չի մասնակցում բաղադրյալ դիմավոր ժամանակների կազմությանը, այն կարող է գործածվել **եմ** օժանդակ բայի երրորդ դեմքի հետ և կազմել միադիմի բայ՝ դառնալով բաղադրյալ ստորոգյալ՝ «պետք է», «անհրաժեշտ է» նշանակությամբ՝ արտահայտելով ներգործական, կրավորական և չեզոք սեռերի իմաստներ:

Բացի **եմ** օժանդակ բայից՝ **-ի** մասնիկով ապառնի դերբայը կարող է գործածվել նաև **լինիմ** բայի հետ՝ դառնալով ստորոգելի, արտահայտելով կրավորականության գաղափար:

9. **-ի** մասնիկով ապառնի դերբայը հիմնականում գործածվում է անկախաբար՝ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով: Թեև գրաբարում այն դեռևս բայական հասկացություն էր, սակայն անկախաբար կիրառվելիս դրսևորում է մեծ մասամբ անվանական արժեք՝ գործածվելով գոյականի, ածականի և մակբայի նշանակությամբ:

10. Միջին հայերենում անցյալ դերբայը, որպես գրաբարաբանություն, շարունակում է հանդես գալ և՛ անկախ, և՛ կախյալ գործառույթներով: Անկախաբար գործածվելիս անցյալ դերբայը կարող է արտահայտել ինչպես դիմավոր բայի իմաստ, այնպես էլ կիրառվել և՛ իբրև ենթակա, և՛ իբրև գոյականական կամ բայական անդամի լրացում:

Այս շրջանում պահպանված են **անցյալ դերբայ+եմ, լինել, ունեն, կամ, տեսանեն, ասել, գտանել** եղանակային ձևերի կիրառությունները:

11. Միջինհայերենյան շրջանում տեղի է ունենում անցյալ դերբայի ձևա-իմաստային երկփեղկում. անցյալ դերբայի հիմք վրա առաջանում են երկու դերբայներ՝ **վաղակատարը՝ -ել** և **-եր**, և **հարակատարը՝ -ած** վերջավորություններով:

Եթե վաղակատարը հանդես է գալիս միայն կախյալ կիրառությամբ (եմ օժանդակ բայի հետ կազմելով սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևեր), ապա հարակատար դերբայը գործածվում է և՛ անկախաբար, և՛ **եմ, կամ, ունիմ, լինիմ** բայերի հետ:

Միջինհայերենյան շրջանում (Ն. Շնորհալի, Վարդան Սեծ, Ֆրիկ, Խ. Կեչառեցի, Գր. Աղթամարցի) **-եալ, -ել, -եր, -ած** վերջավորություններով դերբայները հանդես են գալիս հետևյալ հաճախականությամբ՝ **անցյալ դերբայն անկախաբար՝ 1943, անցյալ դերբայ+եմ/էի օժանդակ բայ՝ 204, անցյալ+լինիմ՝ 26, անցյալ+կամ՝ 18, անցյալ+ունիմ՝ 9, -ել+եմ/էի օժանդակ բայ՝ 202, -եր+եմ/էի օժանդակ բայ՝ 52, -ած+եմ/էի օժանդակ բայ՝ 79, -ած վերջավորությամբ ձևերն անկախաբար՝ 220:**

12. Միջին հայերենում ապառնի դերբայն ունի **-ոց, -ի, -ոյ, -ու** ձևերով տարբերակներ: Սրանցից առաջին երկուսը գրաբարաբանություն են և շարունակում են գործածվել միջինհայերենյան երկերում: **-Ոց** մասնիկը **եմ** օժանդակ բայի ներկայի և անցյալի հետ կազմում է **սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի և սահմանական եղանակի անցյալ ապառնի** ժամանակաձևերը:

ա) Վիճակագրական փաստերը վկայում են, որ **-ոց** մասնիկով **ապառնի դերբայ+եմ/էի** կառույցը ոչ հաճախ է հանդիպում այս շրջանում (վիճակագրությունը



կատարվել է ըստ Խ. Կեչառեցու, Գր. Աղթամարցու, Ս. Գունդստաբլի, Ն. Հովնաթանի երկերի և Ն. Քուչակի քառյակների): Վիճակագրությունն այսպիսին է՝ **ապառնի դերբայ+եմ՝ 11, ապառնի դերբայ+եմ՝ 1**:

բ) **-Ի** մասնիկով ապառնի դերբայը գործածվում է և՛ օժանդակ բայի հետ, և՛ անկախաբար: Անկախաբար գործածվելիս նրա դերբայական իմաստը նվազում է՝ ձեռք բերով անվանական արժեք, որը դեռևս նկատելի էր գրաբարում:

գ) Գործառական լայն շրջանակներ ունեն ապառնի դերբայի **-ոյ** և **-ու** մասնիկներով տարբերակները, որոնք հանդես են գալիս և՛ օժանդակ բայի հետ՝ կազմելով բաղադրյալ ժամանակներ, և՛ անկախաբար՝ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով: **-Ու** մասնիկով ապառնի դերբայի տարբերակը ավելի հաճախ է գործածվում միջին հայերենի երկրորդ շրջանում և լայնորեն տարածված է ժամանակակից գրական հայերենի երկու տարբերակներում:

13. Նոր գրական հայերենի երկու տարբերակներում դերբայները ի հայտ են բերում հետևյալ գործառական արժեքները՝

ա) Միջինհայերենյան շրջանում անցյալ դերբայից առաջացած վաղակատար և հարակատար դերբայները՝ որպես քերականական նոր իրողություններ, փոխանցվում են արդի գրական հայերենի երկու տարբերակներին. ժամանակակից արևելահայերենը ժառանգում է **-ել+օժանդակ բայ**, իսկ արևմտահայերենը՝ **-եր+օժանդակ բայ** կառույցները:

բ) Եթե արևմտահայերենում հարակատար դերբայը կախյալ արժեքով մասնակցում է հիմնական եղանակային ձևերի կազմությանը, ապա արևելահայերենում այն կազմում է միայն բաղադրյալ երկրորդական ժամանակներ, իսկ անցյալ դերբայով կազմված որոշ բայաձևեր՝ իբրև քարացած կառույցներ, պահպանվել են գրական հայերենի երկու տարբերակներում՝ զրկվելով բայական իմաստից:

14. **-Ու** վերջավորությամբ ապառնի դերբայը և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում անկախաբար չի գործածվում, այլ հանդես է գալիս միայն դիմավոր ձևերի կազմության մեջ. արևելահայերենում մասնակցում է սահմանական եղանակի, իսկ արևմտահայերենում՝ հարկադրական եղանակի ժամանակաձևերի կառույցները:

15. Եվ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում ապառնի դերբայն ունի նաև հնացած **-իք** մասնիկով ձևը, որը որոշ լեզվաբանների կողմից դիտվում է իբրև ապառնիի II տարբերակ: Այս ձևերը արևելահայերենում ձեռք են բերել ինքնուրույն բառային-բառությանից արժեք և բառարաններում տրված են իբրև առանձին բառական միավորներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հոդվածներում՝

1. Անցյալ դերբայի ոճական-շարահյուսական առանձնահատկությունները Փավստոս Բուզանդի «Պատմութիւն հայոց» երկում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 4(57), «Ասողիկ» հրատարակչություն. Երևան, 2013, էջ 105-115:
2. Անցյալ դերբայի կիրառությունները միջին հայերենում, ԵՊՄՀ, Հայագիտական հանդես, N 3-4(23-24), Երևան, 2013, էջ 28-40:
3. Գրաբարի ապառնի դերբայը, Բանբեր ԵՊԼՀ-ի, «Բանասիրություն», 1(30), «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2014, էջ 152-170:



1.2. Формально-функциональные признаки причастия прошедшего времени в среднеармянском и новых литературных армянских языках.

Глава вторая. Причастие будущего времени в армянском языке,

2.1. Причастие будущего времени габара в рукописях V века,

2.2. Причастие будущего времени габара в рукописях VI-XI веков,

2.3. Причастие будущего времени в среднеармянском,

2.4. Причастие будущего времени в литературных вариантах восточноармянского и западноармянского.

Основные выводы исследования:

1. Причастие прошедшего времени габара было многозначным причастием и имело функции, присущие независимым и зависимым причастиям, то есть имело самостоятельное употребление и одновременно с помощью вспомогательной глагола образовывало следующие временные формы: давнопрошедшее-результативное настоящее (результативное) изъявительного наклонения, например, գրեալ եմ, давнопрошедшее-результативное прошедшее время, գրել էի и будущее сложное сослагательного наклонения, գրեալ իցեմ, то есть указанные конструкции на современный армянский переводятся в значении գրել (գրվել), գրած (գրված) եմ, էի, լինեմ, կլինեմ, պիտի լինեմ.

2. В среднеармянском путем изменения окончания եալ на причастия -ել, -եր прошедшего времени габара образовывалось причастие давнопрошедшего времени, которое имело значение только парадигматической единицы. Независимое употребление причастия прошедшего времени становится признаком тяготения к габару.

Образование причастия результативного времени с окончанием -ած также способствовало укреплению зависимой функции конструкций с окончанием -ել, -եր. Причастие давнопрошедшего времени в двух вариантах нового литературного армянского языка – это зависимое причастие, а причастие результативного времени в западноармянском имеет функциональное поле, характерное для зависимых и независимых причастий, а в восточноармянском – значение только независимого причастия.

3. В качестве независимого причастия в древнеармянском причастие прошедшего времени имело номинативную и глагольную функцию.

4. Причастие будущего времени с частицей –ոց образовывало аналитические формы изъявительного наклонения գրելոց եմ, գրելոց էի. В то же время с причастием будущего времени с частицей –ոց использовались варианты գրելոյ, գրելոյն с –ոյ, ոյ, которые употреблялись и со вспомогательными глаголами, образуя аналитические формы, и независимо, выступая в разных синтаксических функциях. В основе образования причастия будущего несовершенного времени нового литературного армянского лежит форма генетива и датива неопределенного причастия - գրելոյ-գրելոյն. Последнее образует в двух вариантах нового литературного армянского языка разные парадигмы, в западноармянском – временные формы долженствовательного наклонения, в восточноармянском – изъявительного.

5. С помощью конструкции причастие будущего времени с частицей ոց+вспомогательный глагол также образовывались три составные временные формы: будущее сложное изъявительного наклонения, գրանելոց եմ, будущее в прошедшем изъявительного наклонения՝ գրանելոց էի и будущее сложное сослагательного наклонения, գրանելոց իցեմ, из которых первые две на новый

армянский переводятся временными формами будущего времени изъявительного наклонения (գոնելի եմ) и будущего прошедшего (գոնելի էի), а конструкция: причастие будущего времени+вспомогательный глагол соответствовала значениям будущего времени желательного, условного и долженствовательного наклонения современного армянского, образованным путем сопоставления конструкции: причастие будущего несовершенного времени +глагол быть, գոնելի լինեմ, լիլինեմ, պիտի լինեմ.

6 Причастие будущего времени с частицей –ի в грабаре и среднеармянском использовалось со вспомогательным глаголом, образуя одноличный глагол, однако на самом деле оно использовалось независимо, выступая в различных синтаксических функциях. Хотя вариант с частицей –ի в грабаре был еще глагольным понятием, при независимом употреблении он все же имел номинативную функцию. В последующие века развития армянского языка возникли формы с ի(ք), которые некоторые лингвисты считают устаревшими и рассматривают как единицы, имеющие отдельную словарную и лексемную ценность.

Narine Varuzhan Markosian

Expression of Past and Future Participles in Armenian.

Dissertation on Candidate's Degree in Philological Sciences on the Specialization 10.02.01 -  
The Armenian Language

The Defense will be held at the Address: 0015, RA, Yerevan, Grigor Lusavorich 15, Institute of  
Language after Hr. Acharyan of the National Academy of Sciences, at the session of  
Specialized Council on Linguistics 019 HAC, at 15:00, 15.06.2015

## SUMMARY

In the research work the introduction of literature pertaining to 3 periods of Armenian indicate that throughout the language development Past Participle of grabar (Old Armenian), having semantic functions of dependent and independent participles converted into auxiliary verb.

Based on the thorough synchronous examination of its functional manifestations some speech patterns define it as a stylistic unit. The literary men of Old Armenian era skillfully used it as a stylistic unit in their works of all genres written in Old Armenian (grabar).

The diachronous investigation of Past and Future Participles sheds light upon the history concerning the formation of compound analytical tense forms in two varieties of Armenian, introducing them as paradigmatic units, emphasizing, the differences in the bases of the aforementioned paradigmatic units.

The *aim* of the research was

1. To introduce the morphological semantic features of Past and Future Participles in Old Armenian. Through synchronous research reveal their morphological, syntactic and stylistic characteristics, defining all those norms and exceptions which were typical of them as auxiliary verbs used with Perfect Participle.

2. Through diachronous research to reveal the changes that they underwent in two varieties of Armenian i.e. Middle Armenian and Modern Armenian.

The research work consists of Introduction, “The Perception of Past and Future Participles in the Armenian Grammatical Studies”,

Chapter One “Past Participle in Armenian”,

1.1 “The Morphological Functional Features of Past Participle in Old Armenian,

- a) Grabar’s Past Participle in 5<sup>th</sup> century’s literature,
- b) Past Participle in the 6<sup>th</sup>-11<sup>th</sup> centuries’ literature,
- c) The syntactic, stylistic characteristics in Old Armenian literature.

1.2 The formal and functional characteristics of Past Participle in Middle and Modern Armenian,

Chapter Two “Future Participle in Armenian”,

- 2.1. Future Participle in grabar (Old Armenian) in the 5<sup>th</sup> century’s literature,
- 2.2. Future Participle in grabar (Old Armenian) in the 6<sup>th</sup>-11<sup>th</sup> centuries’ literature,
- 2.3. Future Participle in grabar (Old Armenian) in Middle Armenian,
- 2.4. Future Participle in grabar (Old Armenian) in Eastern Armenian and Western Armenian.

The main findings and conclusions of the research work are

1. Grabar’s Past Participle in Old Armenian was a polysemantic participle and had the function which was characteristic of dependent and independent participles. In other words, it had independent use but simultaneously with the help of the auxiliary verb “em” formed the following tenses of the indicative mood Present Perfect like “greal em” as well as Past Perfect (grel ei). In Subordinate Mood it formed compound future tense (greal icem). The latter were polysemantic in terms of their voice, i.e. the aforementioned patterns were translated into ashkharabar (Modern Armenian) in the following way: “grel” “grvel”, “grats” “grvats”, “em” “ei” “linem” “klinem”, “piti linem”.

With the help of grabar’s (Old Armenian’s) “ots” particle, Future Participle and auxiliary verb three compound tenses were formed i.e. Indicative Mood’s Compound Future (gtanelots em), Future in the Past (gtanelots ei) as well as Subordinate Mood’s Compound Future Tense (gtanelots itsem). The first two of the aforementioned tenses are translated into Future (gtnelu em) and Future in the Past (gtnelu ei) in the Indicative Mood of Modern Armenian, while the construction consisting of Future Participle+ Future auxiliary verb corresponds to Modern Armenian grammatical combination of Future Participle + “to be” verb which are formed by Subjunctive, Conditional, Compulsive Moods, expressing futurity e.g. gtnelu linem, klinem, piti linem.

2. Being an independent Participle, Past Participle had nominal and verbal functions in Old Armenian. The category of Case expressed its semantic characteristics. It belonged to “vo” declension, having the paradigm of singular and plural numbers which conditioned its nominal function. Its use in the verbal meaning was widespread

in Old Armenian. In this case, the pattern consisting of Past Participle+ Finite Verb, existed where Past Participle had three meanings, being translated as

- a) Infinitive in instrumental meaning,
  - b) In the meaning of the Finite Verb with which Past Participle was used,
  - c) In the given pattern it wasn't translated, having just stylistic value and emphasizing the meaning of the action. In this case it was synonymous with the finite verb. Due to the aforementioned function, idiomatic units acquired special value.
3. If the Past Participle was used as an independent unit and had complements, then it formed participial construction. In the present research a special emphasis was put on the participial constructions formed by Future and Past Participles.
  4. The Old Armenian "eal" ending of Past Participle transformed into "el", "er", in Middle Armenian and formed Perfect Participle. The latter had only paradigmatic value. The independent uses of Past Participle became pro- grabarian (pro- Old Armenian) reality. The formation of Past Participle with the help of ending "ats" also led to the strengthening of the dependent use of patterns which contained "el", "er" endings. The Perfect Participle in two varieties of Modern Armenian is a dependent Participle. While Past Participle has a feature of dependent and independent participial functional field in Western Armenian. Nevertheless, it has only independent participial meaning in Eastern Armenian.
  5. The Old Armenian Future Participle having "ots" particle in Middle Armenian era compounded some analytical tense forms in Indicative Mood e.g. grelots em, grelots ei. Simultaneously "ots", "u" varieties were used with Future Participle ending in "ots", which functioned with auxiliary verbs, compounding analytical tense forms and they also functioned independently, occupying different syntactic positions. The issue of tense forms with "itsem" (which later led to the development of compound secondary tense forms) is controversial. We adhere to the approach that the latter (the aforementioned tense forms) are formed by the Infinitive and in secondary compound tense forms we have patterns which are combined with Past Participle, Participle I combined with the word while (e.g. while reading, eating) and infinitive in Genitive Case with the conjugated forms of the verb "to be" as in Modern Armenian Future Participle is formed by the infinitive used in Genitive and Dative Cases i.e.greloi-grelu. The latter in two varieties of literary Armenian form different paradigms; namely in Western Armenian they form Compulsive Mood and in Eastern Armenian they form tenses of the Indicative Mood.
  6. The Future Participle with "i" particle in Old Armenian and Middle Armenian was used with the auxiliary verb, forming impersonal verb. However, the given Participle is mainly used independently, having different syntactic functions. Although the variety with the particle "i" was still a concept referring to verb, being used independently it mainly manifested nominal value. Some linguists consider the "ik" patterns as archaic and view them as lexemes throughout the development of the Armenian language in further centuries.



